

Ք. Գ. ԶԱԲԱՐՅԱՆ, Աստրախանի Աղաբաբյան հայոց ուսումնարանը (1809-1918 թթ.),
Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1999 թ., 98 էջ:

Հայ բազմահարուստ մշակութային կյանքում առանձնակի կարևոր տեղ է գրավել արևելահայ առաջին կանոնավոր աշխարհիկ դպրոցը՝ Աստրախանի Աղաբաբյան հայոց ուսումնարանը, որի ամբողջական և համակողմանի պատմությանն է նվիրված մանկավարժական գիտությունների թեկնածու Հայկազ Գևորգի Զաքարյանի «Աստրախանի Աղաբաբյան հայոց ուսումնարանը» գիրքը (խմբագիր մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Ա. Մուսայելյան):

Հեղինակը պատմամանկավարժական տեսանկյունից, հարուստ արխիվային փաստերի հիման վրա լուսաբանել է ուսումնարանի կրթության բովանդակությունը, ուսուցման ու դաստիարակության մեթոդները, կառավարման ձևերը, կանոնադրությունները, ինչպես և վարիչների, պատվավոր բարերարների, ուսուցիչների, վերակացուների և շրջանավարտների ծավալած օգտաշատ գործունեությունը:

Հետազոտողը նախ մանրամասն անդրադարձել է Աղաբաբյան հայոց ուսումնարանի հիմնադրման տնտեսական, սոցիալական, հասարակական, կրթական դրդապատճառներին՝ կապված Ռուսաստանում առևտրի ու արդյունաբերության զարգացման նորոտյա խնդիրների հետ: Այդ խնդիրների լուծումը ակտրախանահայ առևտրականներից պահանջում էր մաթեմատիկայի, աշխարհագրության, ծովային առևտրի կանոնների կազմակերպման լավ իմացություն: Այդ իսկ պատճառով ուսումնարանի հիմնադիր, վաճառական Նիկողայոս Աղաբաբյանը կազմել էր ծրագրեր՝ հաշվարկված առևտրականների, ծեռնաբկատերերի, ծովագրանացների, թարգմանիչների և այլ մասնագետների պատրաստման համար:

Հայկազ Զաքարյանի հետազոտությունը կատարվել է մեծ ծավալի գրականության և Երևանի, Պետերբուրգի, Մոսկվայի, Աստրախանի, Կազանի արխիվների սկզբնաղ-

բյուրների ուսումնասիրմամբ և մանրամասն շարադրվել հայկական ուսումնարանի հիմնադրման պատմությունը: Հետազոտման մեջ փուլ առ փուլ լուսաբանվում է ուսումնարանի ավելի քան մեկդարյա պատմությունը: Հեղինակի հիմնական ծառայությունը ուսումնարանի պատմության պարբերացումն է, որի հիմքում նա դրել է կանոնադրությունների մշակումն ու ընդունումը (1822, 1838, 1865, 1917 թթ.), որոնք առաջին անգամ ինքն է հայտնաբերել և հրատարակել: Այսպիսի պարբերացումը լիովին արդարացված է, քանի որ յուրաքանչյուր նոր կանոնադրության ընդունումով փոխվում էին դպրոցի ծրագիրն ու կառուցվածքը: 1822 թվականի կանոնադրությունից հետո այս հայկական կրթական հաստատությունը մտավ ժողովրդական լուսավորության համակարգի մեջ: Աղաբաբյան ուսումնարանը առանձնանում էր նաև իր որակյալ մանկավարժական կադրերով՝ ինչպես հայ, այնպես էլ ռուս:

1838 թվականի կանոնադրության ընդունումից հետո՝ ծրագիրը նորից ընդլայնվեց դեպի գործնական առարկաները: Ծրագրի մեծ տեսակը, ինչպիսին ունեցել է Աղաբաբյան ուսումնարանը 19-րդ դարի առաջին կեսին, շուտով կազմեց Ռուսաստանում ստեղծված ռեալական ուսումնարանների համակարգի հիմքը: Ապա 1865 թվականի կանոնադրության ընդունումով ավելացավ նաև ուսուցման տնտեսությունը (մինչև 6 տարի), իսկ ծրագրի մեջ մտցվեցին այնպիսի առարկաներ, ինչպիսիք են հանրահաշիվ, ֆիզիկա, գծագրություն, անատոմիա, հողագործության հիմունքներ, անասնապահություն, գինեգործություն և այլն, որոնք գոյություն ունեին միջնակարգ և մասնագիտական ուսումնական հաստատությունների, դասական գիմնազիաների և ռեալական ուսումնարանների ծրագրերում:

Առարկաները, բացառությամբ ռուսաց լեզվի, ռուսական պատմության, դասա-

վանդվել են հայերեն: Սկզբնական շրջանում բացակայում էին անհրաժեշտ դասագրքերը: 1820-1840 թվականներին ուսումնարանի ուսուցիչներն իրենք են գրել մի քանի դասագրքեր: Դրանցից մի քանիսը տպագրվել է տեղական հայկական տպարանում: Հետագայում կարգավորվել է դասագրքերի մատակարարումը՝ հրատարակված Մոսկվայում, Թիֆլիսում, Էջմիածնում:

Հայկազ Ջաքարյանի գրքում լուսաբանվում է Աղաբաբյան ուսումնարանի ուսումնարաստիարակչական աշխատանքը, դասավանդման բովանդակությունը, ուսուցման մեթոդիկայի մշակումը: Ուսումնարաստիարակչական գործընթացի կազմակերպման և դրայրոցի նյութական բազայի ամրապնդման գործում մեծ դեր են խաղացել Մանկավարժական և Հոգաբարձական խորհուրդները:

Գրքում տեղեկություններ են հաղորդվում ուսումնարանի շատ ուսուցիչների մասին, որոնք որպես կանոն եղել են Աստրախանի լավագույն մանկավարժները, ինչպես նաև հայկական նշանավոր ուսումնական հաստատություններում աշխատանքի փորձ ունեցող ուսուցիչներ: Հեղինակը պատմում է նաև ուսումնարանի մի քանի սաների մասին, որոնք դարձել են գիտության, մշակույթի, ժողովրդական տնտեսության, բժշկության բնագավառներում նշանավոր մասնագետներ:

20-րդ դարի սկզբին Աղաբաբյան հայկական ուսումնարանը ազգային առաջատար ուսումնական հաստատություններից էր: Ռուսաստանի ժամանակավոր կառավարության 1917 թվականի օգոստոսի 19-ի որոշմամբ ուսումնարանը վերածվեց Հայկական լրիվ գիմնազիայի՝ երկու սեռերի աշակերտների համար: Այն եղել է առաջին հայկական միջնակարգ ուսումնական հաստատություններից մեկը Ռուսաստանում:

Ցավոք, խորհրդային իշխանության առաջին տարիներին ազգային քաղաքականության մարզում դրսևորված խեղաթյուրումների և կրթության բոլոր ծևերի համահարթեցումը հանգեցրին այնպիսի եզակի լուսավորական օջախի լուծարմանը, ինչպիսին էր Այտրախանի Աղաբաբյան ուսումնարանը ավելի քան հարյուր տարվա ընթացքում:

Հայկազ Ջաքարյանը կատարել է շատ հետաքրքիր և անհրաժեշտ հետազոտություն: Նրա աշխատանքի նշանակությունն էլ ավելի արդիական է մեր օրերում, երբ Ռուսաստանի տարբեր քաղաքներում և տարածաշրջաններում երևան են գալիս կամ աշխուժանում հայկական համայնքները, որոնց կյանքում կարևոր տեղ է գրավում ազգային կրթության կազմակերպումը օտար պետության պայմաններում:

Վ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ